

ՍԻՄԵՈՆ ԶՈՒՂԱՅԵՑՈՒ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Ա. ՄԻՐՋՈՅԱՆ

XVII դարի հայ անվանի փիլիսոփա, քրական, մանկավարժ և հասարակական գործիչ Սիմեոն Զուղայեցին նշանակալից տեղ ունի հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության մեջ։ Նա թողել է բավականին հարուստ ժառանգություն՝ հիմնականում փիլիսոփայական երկեր, որոնց մարքսիստական վերլուծությանը միայն վերջին ժամանակներում ձեռնամուխ են եղել սովետահայ գիտնականներ Հ. Գաբրիելյանը, Վ. Չալոյանը, ինչպես և վրաց գիտնական Գր. Քալանթարյանը, մասամբ նաև Շ. Նուցուրիձեն՝ վրացական փիլիսոփայական մտքի վրա Զուղայեցու գործած ազդեցության կապակցությամբ։ Զուղայեցու մասին այս կամ այն առիթով խոսել են նաև նախասովետական և սովետական մի շարք այլ գիտնականներ՝ Գ. Զարբհանալյան, Հ. Տաշյան, Բ. Սարգիսյան, Ն. Ակինյան, Ն. Մառ, Մ. Աբեղյան, Հր. Աճառյան, Արշ. Ալպոյաճյան և ուրիշներ։ Այս ամենից հետո առ այսօր հրապարակի վրա չկա Զուղայեցու կյանքին ու գործունեությանը նվիրված մի ամբողջական հոդված, ուր ժամանակի ֆոնի վրա տրված լինի նրա կենսագրությունը, որը խիստ կարևոր է Զուղայեցու ժառանգությունը նիշտ հասկանալու և գնահատելու համար։ Այդ է պատճառը, որ առանձին հեղինակներ Ս. Զուղայեցու մասին խոսելիս երբեմն թույլ են տալիս անճշտություններ, որոնք խանգարում են ըստ արժանվույն գնահատելու Ս. Զուղայեցու գերը հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության մեջ։ Սույն հոդվածի նպատակն է, մեր ուժերի ներածին չափ, մասամբ լրացնել այդ բացը։ Որպես հիմնական սկզբնաղբյուր օգտագործել ենք Առաքել Դավրիժեցու «Հայոց պատմություն»-ը և դրա առաջին հրատարակությանը (1669 թ.) կցված Ոսկան Երևանցու համառոտ կենսագրությունը, ինչպես նաև իր՝ Սիմեոն Զուղայեցու և այլոց կողմից գրված առանձին ձեռագրերի հիշատակարանները։ Ըստ կենսագրական տվյալների, Ս. Զուղայեցին պետք է ծնված լինի Հին Զուղայում XVI դարի վերջերին (1595—1600 թթ.)։ Դեռ մանուկ հասակում, 1605 թ. Շահ-Աբասի բռնագաղթի ժամանակ, տարվել է Նոր-Զուղա՝ կրելով բռնագաղթի ճանապարհի այն անլուր դժվարություններն ու զրկանքները, որոնք այնքան սրտաճմլիկ գույնեերով է նկարագրում XVII դարի նշանավոր պատմագիր, Զուղայեցու աշակերտ Առաքել Դավրիժեցին։

Սկզբնական կրթությունն ստացել է Նոր-Զուղայում, իսկ 1620 թ. աշակերտել է տեղի հույ գեոր առաջնորդ հաշատուր Կեսարացուն՝ Ամենափրկիչ վանքին կից վերջինիս բացած դպրոցում և մինչև ուսուցչի մահը (1646 թ.) եղել նրա հոգևոր որդին, անբաժան ընկերն ու անխոնջ գործակիցը։ 1623 թ. Գրիգոր Տաթևացու իր արտագրած «Հարցմանց գրքի» հիշատակարանից իմանում ենք, որ նա արդեն քահանա է ձեռնադրված եղել¹։

Սիմեոնի արտագրած այս ձեռագիրը կարևոր արժեք ունի ոչ միայն նրա կենսագրության ուսումնասիրության, այլև փիլիսոփայական հայացքների ձևավորման ու զարգացման ընթացքը հասկանալու համար։ Իր գործունեության հենց սկզբից նա հանգես է գալիս որպես հայ մտավոր մշակույթի լավագույն ավանդների շարունակող ու զարգացնող. «Հարցման գրոյս ցանկացող ևղայ, և ես Սիմոն երէցս գրեցի»։ 1629 թ. Մովսէս կաթողիկոսը (1629—1633 թթ.) լեհահայերի մոտ նվիրակ է ուղարկում հաշատուր վարդապետ Կեսարացուն, որն իր հետ վերցնում է նաև երեք հոգու՝ դրանց թվում և Ս. Զուղայեցուն։ Նախքան լեհաստան մեկնելը խ. Կեսարացին լինում է հայրենի Կեսարիայում, ուր հանդիպում է իր հայրենակից Գրիգոր Կեսարացու հետ, որը 1627 թ. նույնպես նվիրակ է եղել լեհահայերի մոտ, նրանից ստանում է որոշ խորհուրդներ ու հանձնարարություններ և նույն թվականին գնում է Կ. Պոլիս, որտեղ հանդիպում է XVII դարի աչքի ընկնող գործիչ ու հայտնի ժամանակագիր Գրիգոր Դարանաղցուն²։

1 Տես. Ս. Տեր-Ավետիսյան, Յուզակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի, Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գործ № 188, էջ 1302։

2 Գր. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 452։

էջմիածնի նվիրակները հասնում են Լվով 1630 թ. սեպտեմբերին և ականատես լինում լեհահայերի այն բոլոր տառապանքներին, որ պատճառել էր հոգևոր առաջնորդ, կաթոլիկ դարձած հայազգի եպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչը: Էջմիածնի նվիրակ հաշատուր Կեսարացին և իր աշակերտներն ամեն կերպ աշխատում են դադարեցնել լեհահայերի և Նիկոլ Թորոսովիչի հակամարտը, որը լեհահայերին գրել էր անելանելի դրուժյան մեջ: Սակայն նրանց գործադրած ջանքերն անցնում են ապարդյուն: Ավելին, Նիկոլ Թորոսովիչը և նրա աջակից կաթոլիկ միսիոներները, տեսնելով, որ Էջմիածնի նվիրակները մեծ համբավ ունեն ժողովրդի աչքում և խոչընդոտում են իրենց գործունեությանը, աշխատում են նրանց անսովորական ու հեռացնել լեհաստանից: Այդ նպատակով Նիկոլ Թորոսովիչը նախ կառավարության առաջ ամբաստանում է հաշատուր Կեսարացուն որպես թուրքական լրտեսի և ապա նրա աշակերտներին ծաղր ու ծանակի ենթարկում կաթոլիկ միսիոներների հետ ունեցած հրապարակային վիճարանությունների ժամանակ, որտեղ ի հայտ է գալիս Կեսարացու աշակերտների կրթական ցածր մակարդակն ու գիտելիքների պակասը հենց մայրենի լեզվի իմացության մեջ: Այս ամենից հետո Էջմիածնի նվիրակներին ոչինչ չէր մնում անելու, և նրանք Նիկոլի սաղարաններից խուսափելու համար, ստիպված, 1631 թ. սկզբին, ձմռան խիստ ցրտերին վերադառնում են Էջմիածին և տեղեկացնում լեհահայոց ծանր վիճակը:

Վերադառնալով Հայաստան, հաշատուր Կեսարացին և Սիմեոն Զուղայեցին Նրեանում հանդիպում են այդ ժամանակ գիտունի մեծ անուն հանած, փիլիսոփայական բավականին խոր գիտելիքներ ունեցող Մելիքսեթ Վժանեցուն. «Հայր կորովի և բանիրուն, զգտողն հանճարոյ բնաբանականին մասնաւորաբար»:

1631 թ. գարնանը՝ հ. Կեսարացին և Ս. Զուղայեցին, որ նոր էին վերադարձել լեհաստանից, սկսում են դասեր առնել Մելիքսեթից. «Որք յիշով պատկառանս բազումս էին կրեալք ի «նղեաց քրիստոնէիցն՝ սակս անհմուտ գոլոյն քերականութեան և ուսման իմաստասիրականաց արհեստից... իբրև հասին լէջմիածին տեսանելով զտէր Մելիքսեթն կարի սիրով ձեռնարկեալ ուսան զգիրս բնաբանականն. զորքան նա գտեալ էր բազմաւ ջանիւ: Նախ զսահմանի Դաւթի Ներգինացոյ յանապատուչն՝ որ Երեանք»: Այս ժամանակ սրանց հետ միասին Մելիքսեթին սկսում է լսել նաև Ոսկան Երեանցին՝ հաշատուր Կեսարացու կրտսեր աշակերտը, Սիմեոնի դասընկերը, որին Նոր-Զուղայից բերել էր Մովսես կաթողիկոսը հաշատուրին և Սիմեոնին նվիրակ ուղարկելուց հետո: Որոշ ժամանակ անց Էջմիածնի արեղաները լսում են այդ մասին և պահանջում Մովսես կաթողիկոսից կամ Մելիքսեթին հրավիրել Էջմիածին, կամ իրենց թույլատրել զնալ Երեան՝ նրան աշակերտելու: Մովսես կաթողիկոսը հարկադրված էջմիածին է հրավիրում Մելիքսեթին, որն անմիջապես ընդունում է հրավերը, իսկ հ. Կեսարացին մնում է Երեանում: Նրանուպասարկելու համար Երեանում է մնում նաև Ոսկանը: Էջմիածնում Սիմեոնը շարունակում է իր ուսումը, բայց դեռ Մելիքսեթի դասախոսությունները լրիվ չլսած, գնում է Նոր-Զուղա, որովհետև հետև հաշատուր Կեսարացին՝ իր հոգևոր հայրը, Նոր-Զուղայից եկած խնդրակների պահանջով կրկին նշանակվում է Սպահանի հոգևոր առաջնորդ: Սրանց հետ Զուղա է վերադառնում նաև Ոսկան Երեանցին: Սիմեոնը և Ոսկանը իրենց գիտելիքների պակասը լրացնում են համառ ու տքնաջան ինքնուրույն աշխատանքով: Այս ամենի մասին մանրամասն պատմում է ինքը՝ Ոսկանը, վերոհիշյալ կենսագրության մեջ: Այստեղից պարզ երևում է, որ Զուղայեցին հնարավորություն չի ունեցել Մելիքսեթին մինչև վերջ լսելու: Մելիքսեթը, ըստ աղբյուրների վկայության, 1631 թ. դասավանդել է ընդամենը 8 ամիս և մահացել նույն թվականի վերջերին, նոյեմբեր կամ դեկտեմբեր ամսին ու թաղվել Կոզևոն գերեզմանոցում: Հետևաբար, մեզ ճիշտ չի թվում Մ. Օրմանյանի, Հր. Աճառյանի և այլոց կարծիքն այն մասին, որ Զուղայեցին լեհաստանից վերադառնալուց հետո Էջմիածնում կրթություն է ստանում երեք տարի³:

3 Ա. Ռ. Դավրիժեցի, Դիրք պատմութեանց, Ամստերդամ, 1669, էջ 632:

4 Ինչպես տեսնում ենք, Զուղայեցին Մելիքսեթին աշակերտել է 1631 թ.՝ նվիրակությունից վերադառնալուց հետո և ոչ թե 1630 թ., ինչպես դրում են Ներսես Ակինյանը և Արշակ Ալպոյաճյանը:

5 Առաքել Դավրիժեցի, Դիրք պատմութեանց, էջ 632:

6 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Բ, գիրք Բ, Պեյրուք, 1960, եր. 2490-2491: Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Գ, Երևան, 1948, էջ 516:

Նոր-Զուղա վերադառնալու հետո նաշատուր Կեսարացին նոր շունչ ու թափ է հաղորդում Ամենափրկիչ վանքին կից գործող դպրոցին, որը բացել էր ինքը դեռ 1620 թ.։ Նա հավաքագրում է նոր աշակերտներ, թարմացնում դասավանդման ձևերն ու մեթոդները՝ մասամբ ընդօրինակելով եվրոպական կրթական սխեման, այն նորն ու դրականը, որ տեսել էր Լեհաստանում։ Էղած ժամանակ Արտակարգ հոգատարություն է ցուցաբերում ուսումնասիր աշակերտների հանդեպ, ապահովում է նրանց նյութապես, որպեսզի կարողանան զբաղվել միայն ուսումնառությամբ։ Այս տեսակետից առանձնապես բարեհոգի է գտնվում Ս. Զուղայեցու նկատմամբ, որն իր ջանասիրության ու ընդունակությունների համար արդեն վաղուց ի վեր արժանացել էր հաշվեհարար հատուկ հոգատարությանը⁷։

Սպահանում Զուղայեցին մոտ երեք տարի պարապում է ինքնակրթությամբ և ձեռք բերում Եյնքան հարուստ գիտելիքներ, որ վեր է բարձրանում իր ժամանակի բոլոր գիտուններից և մեծ համբավ վաստակում ոչ միայն հալերի, այլև այլազգիների մոտ։

«Եւ զամս երիս ի յընթերցումն և ի խոկումն կապեալ ունէր զինքն բաշում ջանիւ, և յօժարութեամբ... Եւ ի բազմաժամանակեայ և ի մշտաջան աշխատութենէն, յաւելեալ տեսական իմաստութիւն ի միտս սորա», դարձավ «գերապանծ և շնորհալի ի քարոզութիւնս, ի հակաճառութիւնս, ի մեկնութիւնս Աստուածաշունչ գրոց, կամ արտաքին գրոց, ի բնական քննութիւնս, և ի փիլիսոփայական արուեստս, անհամեմատ և գեր ի վերոյ եղև քան զամենայն վարդապետս ժամանակիս այսր, որ ամենեքեան խոնարհեալ առ նա ուսանէին ի նմանէ դասիւ և այլ կերպիւ։ Եւ վասն զի ի մայրաքաղաքն յԱսպահան պոլով սոցա, որ բուն մայրաքաղաքն է Պարսից, յորմէ ազդէ արք փիլիսոփայք գային և հարցաքննութիւն, և հակաճառութիւն առնէին. և տէր Սիմէօնս զամենայն եկողս հիացուցանէր փիլիսոփայական արուեստիւ և բնական քննութեամբ՝ տալով նոցա պատասխանի»⁸։

Որ Սիմեոն Զուղայեցին եղել է հմուտ բանավիճող, վկայում է նաև XVII դարի իտալացի միսիոներ, Թեադինյան միաբանության անդամ, նշանավոր հայագետ Կղեմես Գալանոսը. «Սիմեոն Զուլֆայեցի։ Ընդ սմա մեք սրամարանեցաք յաղագս սուրբ հաւատոց ի Կոստանդնուպոլիս և քանզի ունէր համբաւ ամենիմաստ վարդապետի առ ժողովուրդն. զբազում աշակերտս մոլորեցուցանէր»⁹։ Բերված քաղվածքը մեզ համար հետաքրքրական է մի քանի առումով, նախ՝ որ Գալանոսը անձամբ բանավիճել է Ս. Զուղայեցու հետ, հավանաբար, պարտվել և դրա համար էլ ատելությամբ է խոսում նրա մասին, բայց, այնուամենայնիվ, ստիպված է խոստովանել, որ Զուղայեցին ունեցել է «ամենիմաստ վարդապետի» համբավ և շատ հետևորդներ։ Բարի դրանից մենք իմանում ենք նաև, որ նրանք րրար հանդիպել են Կ. Պոլսում (լատիններն բաժնում հիշատակված է Թրակիա), իսկ Գալանոսը Կ. Պոլսում եղել է 1641—1643 թթ.։ Ուրեմն այդ նույն ժամանակ Զուղայեցին էլ պետք է եղած լինի Կ. Պոլսում, որ փաստորեն երկրորդ անգամն էր ինքնակրթությամբ Զուղայեցին կարողանում է ձեռք բերել քերականական և փիլիսոփայական այնպիսի հարուստ գիտելիքներ, որ մի քանի տարի հետո Ամենափրկիչ վանքի դպրոցում սկսում է դասավանդել քերականություն ու փիլիսոփայություն՝ կարճ ժամանակում դառնալով այդ դպրոցի կենդանի ոգին ու շունչը, դպրոց, որը տվել է մի շարք նշանավոր գործիչներ և ժամանակակիցներից ոմանց կողմից անվանվել «համալսարան»։ Զուղայեցին դպրոցում դասավանդելիս տեսնում է, որ մայրենի լեզվով քերականության և այլ դասագրքեր չլինելու պատճառով աշակերտները մեծ դժվարությամբ են կարողանում սովորել մայրենի լեզու, քերականություն և արտաքին գիտություններ։ Այդ դժվարությունները վերացնելու, ինչպես նաև այդ ժամանակ հայոց լեզվում տարածում ստացող լատինաբանության դեմ պայքարելու նպատակով 1637 թ. գրում է քերականության մի համառոտ դասագիրք, որտեղ ինքնուրույն ձևով քննարկում է քերականության բոլոր բաժինները՝ հնչյունաբանություն, ձևաբանություն և շարահյուսություն։

Չնայած ծավալի փոքրությանը, Զուղայեցու «Քերականություն»-ը, որ արդի իմաստով հայոց լեզվի հայերեն առաջին ամբողջական քերականությունն էր, մեծ դեր է խաղացել հայ իրականության մեջ։ Այդ հանգամանքը նկատել են դեռ Զուղայեցու ժամանակակիցները։ 1641 թ.

7 Ա. Ռ. Դավրիժեցի, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 402—403։

8 Նույն տեղում, էջ 403։

9 Կ. Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն, Հռովմայ, հատ. Բ, մասն Ա, Հոռմ, 1658, էջ 17ա։

էջմիածնում ավարտված (սկսվել է Նոր-Ջուղայում) մի ձեռագրի հիշատակարանում պատվիրատու Մովսեսը, որ քարտուղար էր եղել Մովսես և Փիլիպոս կաթողիկոսների մոտ և աշակերտել Սիմեոնին, վերջինիս քերականության մասին գրում է. «...որպէս և քերականութեանս իրողութիւն որում ոք երբէք էր տեղեակ յազգէս մերմէ ի վաղուց հետէ մինչև ցայսօր ամանակի ըստ այսմ: Ուստի և որքանութիւն իմաստութեան սորայ սովաւ ծանուցանի, այնոցիկ մտաց որք իսկապէս կարեն բաց որոշել զդիտաւորութիւն քերթողութեանս»¹⁰:

Ս. Ջուղայեցու «Քերականության» մասին շարժը կարծիք է հայտնել նաև բազմավաստակ հայագետ Հակոբոս Տաշյանը. «Այս քերականությունը չի նմանիր հնագույն քերականությանց: Ավելի նոր քերականությանց նմանություն ունի կազմությամբ»¹¹: Համարյա նույնանման կարծիք են հայտնել նաև անգլիացի անվանի հայագետ Կոնրիբրը, Ստեփանոս Ռոշքան և ուրիշներ: Այս կարևոր արժանիքների շնորհիվ է, որ ողջ XVII դարում և XVIII դարի առաջին կեսում հայ իրականության մեջ Ջուղայեցու գիրքը հանդիսացել է դպրոցական հիմնական դասագիրք՝ ունենալով բազմաթիվ ընդօրինակություններ: Միայն Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում կան Ջուղայեցու «Քերականութեան» մի քանի տասնյակ ձեռագիր օրինակներ: Այնուամենայնիվ, ձեռագիր արտագրությունները չեն բավարարում հայկական դպրոցները պահանջները, դրա համար էլ 1725 թ. Հայաստանի տարբեր շրջաններից 24 հոգու նյութական ու բարոյական օգնությամբ Կ. Պոլսում Դարսիրոս Դպիրը լույս է ընծայում Ս. Ջուղայեցու «Քերականութիւն»-ը, և դա այն ժամանակ, երբ արդեն հրապարակի վրա կային հայոց լեզվի հանրապարհական քերականություններ՝ Կլեմես Գալանոսի (1645 թ.), Ոսկան Երևանցու (1666 թ.), Հովհաննես Հոլովի (1675 թ.) և Շրոդերի (1711 թ.):

Ջուղայեցու գրքի շատ ուշ հրատարակվելը որոշ ուսումնասիրողների թյուրիմացության մեջ է գցել և թույլ չի տվել ըստ արժանվույն գնահատել այն¹²:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը իր «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության մեջ խոսելով հայ քերականագիտական մտքի պատմության մեջ դերբայների տարբերացման մասին, գտնում է, որ այդ կատարվում է միայն XVII դարում և առաջինը տալիս է Գալանոսի անունը, այնուհետև խոսում է Հովհաննես Հոլովի և Շրոդերի մասին և բոլորին համարում է լատինարան դպրոցի ներկայացուցիչներ: Սրանցից հետո Ջուղայեցու մասին խոսելիս գրում է. «Գալով Սիմեոն Ջուղայեցուն, պետք է նկատենք, որ սա տեսական հարցերում հիմնականում մնում է իրեն նախորդող քերականների (նկատի ունի Գալանոսին, Հովհաննես Հոլովին և Շրոդերին. սրանք բոլորն էլ հաջորդել են Ջուղայեցուն,—Հ. Մ.) դիրքերի վրա, սակայն դերբայի ըմբռնման հարցում ունի որոշ յուրահատուկ մոտեցում: Ուշագրավ է այն, որ նա դերբայների մեջ դիտում է վեց կատեգորիաներ՝ սերք, ձևք, տեսակք, թիւք, ամանակք, հոլովք»¹³:

Ինչպես տեսնում ենք, ուշ տպագրության պատճառով Ջուղայեցու քերականությունը ըստ արժանվույն չի գնահատվել: Իրականում ոչ թե Ջուղայեցին է տեսական ընդհանուր հարցերում մնացել իրեն նախորդող քերականների՝ դիրքերի վրա, այլ, ընդհակառակը, նրանք են մնացել Ջուղայեցու դիրքերի վրա՝ դերբայների ըմբռնման հարցում իջնելով նրա մակարդակից, որովհետև բոլորն էլ հանդիսանում են լատինարան դպրոցի ներկայացուցիչներ, իսկ Ջուղայեցին պայքարում էր հենց լատինարանության դեմ՝ գրչով ու գործով, թեև երբեմն տուրք էր տալիս դրան՝ բայես պարտադիր հարկ իր ժամանակին:

¹⁰ Ս. Տ ե Ր. Ա վ Լ տ ի ս յ ա ն, Տ ու ջ ա կ հ ա յ ե ռ է ն ձեռագրաց Նոր Ջուղայի, էջ 1408:

¹¹ Հ. Տ ա շ յ ա ն, Տ ու ջ ա կ հ ա յ ե ռ է ն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1995, էջ 809:

¹² Գիտական արժանիքների տեսակետից Ս. Ջուղայեցու «Քերականութիւն»-ը սովետահայ լեզվաբաններից համեմատաբար բարձր է գնահատել պրոֆ. Գ. Զահուկյանը իր «Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը» աշխատության մեջ (Երևան, 1959, էջ 15—16): Բայց, դժբախտաբար, հեղինակն այն արժեքավորում է միայն ուսումնասիրվող մասնակի հարցի կապակցությամբ և առանց որևէ վերապահության դասում է լատինատիպ քերականությունների շարքը:

¹³ Ա. Ա բ Ր ա հ ա մ յ ա ն, Հ ա յ ե ռ է ն ի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 25:

Զուղայեցու մասին պրոֆ. Ա. Աբրահամյանը նույնն է ասում նաև «Բայր ժամանակակից հայերենում» բարձրարժեք աշխատության առաջին գրքի (Երևան, 1962) բայական սեռի վերաբերյալ պատմական ակնարկում:

Ծիշտ նույն պատճառով Զուղայեցու «Քերականութեան» ոչ ճիշտ գնահատականի հանդիպում ենք և վ. Առաքելյանի մոտ, որն իր «Ներածություն հայերենի շարահյուսության» աշխատության մեջ մի քանի բառով տալիս է Զուղայեցու «Քերականութեան» շարահյուսական մասի համառոտ բովանդակությունը և ավելացնում. «Զուղայեցու գրքի շարահյուսական մասը շատ խղճուկ մի բան է և շարժե ավելի ծանրանալ դրա վրա»¹⁴: Ծիշտ է, Զուղայեցու քերականության շարահյուսության բաժինը, լինելով առաջին փորձը, բավականին թույլ է, բայց և այնպես հետաքրքիր մտքեր է արտահայտում համաձայնության, շարահասության, խնդրառության, հոլովների կիրառական նշանակության և այլնի մասին: Ուստի, հարկավոր էր մանրամասն քննել ու արժեքավորել ըստ պատշաճին՝ հաշվի առնելով Զուղայեցու ապրած ժամանակաշրջանը և լեզվաբանական գիտության այն ժամանակվա զարգացման մակարդակը:

Շատ զարմանալի է, որ մինչև օրս հայ լեզվաբանության պատմության մեջ լատինաբանության դեմ առաջին պայքարողի պատիվը տրվում է Մխիթար Սեբաստացուն: Եթե ճիշտ է, որ լատինաբանության դեմ պայքարելու համար է Մ. Սեբաստացին գրաբարում ընդունել տասո հոլով, ապա ճիշտ նույն իմաստներն արտահայտող և նույն թվով հոլովներ է ընդունել նաև Ս. Զուղայեցին¹⁵ նրանից մոտ հարյուր տարի առաջ: Լատինաբան դպրոցի կարևոր հատկանիշն է համարվում և այն, որ, որպես կանոն, լատինաբան քերականները լատինների նմանությամբ հայերենում ևս գոյականի և ածականի համաձայնությունը պարտադիր են համարում, մինչդեռ Զուղայեցին ոչ միայն այդ պարտադիր չի համարում, այլև գտնում է, որ նախադաս ածականներից հոլովորենները համաձայնվում են, իսկ անհոգներին համաձայնությունը պարտադիր չէ, կան նաև «որոց հարկ է տարաձայնիլն»:

Որ Զուղայեցին է հանդիսանում լատինաբանության դեմ պայքարի առաջին լուրջ փորձ կատարողը և ոչ թե Մխիթար Սեբաստացին՝ այդ մասին մենք ունենք բազմապատակ հայագետ, պրոֆ. Մ. Աբեղյանի շատ արժեքավոր դիտողությունները: Խոսելով XVII դարում լայն ծավալ ստացած վանական և անապատական շարժման մասին, պրոֆ. Մ. Աբեղյանը Մխիթար աբբահորը համարում է այդ շարժման մասնակիցների գործի շարունակողը: Շարժման մասնակիցներն «աշխատում են կարդալ և հասկանալ մեր անհասկանալի դարձած ու մոռացված գրականությունն ամբողջ..., արտագրում են բազմաթիվ նոր ձեռագիրներ. աշխատում են գտնել ունիթոնների ձեռով լատինացած գրաբար լեզուն, հորինում են քերականության, տրամաբանության և այլ նոր դասագրքեր՝ օգտվելով գլխավորապես հին գրքերից, և նույնիսկ թարգմանություններ էլ են անում»¹⁶: Այս շարժման հետևանքն, ըստ հեղինակի, լինում է այն, որ «բնականաբար առաջ է գալիս մի նոր գրաբար գրականություն (ընդգծումը հեղինակինն է,—Ն. Մ.), որի առաջին ներկայացուցիչները լինում են Սիմեոն Զուղայեցի և Առաքել Դավրիժեցի, իսկ վերջինը Արսեն Բագրատունի»¹⁷: Մի քիչ հետո Մ. Աբեղյանը Առաքել Դավրիժեցու պատմության արժանիքների մասին խոսելիս գրում է. «Իբրև Սիմեոն Զուղայեցու ֆեռականության աշակերտ, լատինացած լեզվին եմբարկվելու տեղը, ավելի հետևել է ժողովրդական պարզ շարադասությանը (ընդգծումը մերն է,—Ն. Մ.), կենդանի ժողովրդական ձևերին ու դարձվածներին»¹⁸:

Եթե հայ լեզվաբանության պատմության մեջ Միքայել Զամչյանը ուրույն տեղ է գրավում և մենից առաջ այն պատճառով, որ «վերջնական և ուժգին հարված հասցրեց» հայոց լեզվում տեղ գտած օտարաբանությանը՝ լատինաբանությանը, ապա, ինչպես տեսանք վերևում, Ս. Զուղայեցին հանդիսանում է այդ մեծ ու պատվավոր գործի սկսողը: Դժբախտաբար, առ այսօր մեր լեզվաբաններն այդ հանգամանքների վրա շատ քիչ ուշադրություն են դարձրել և ըստ արժանվույն չեն գնահատել Սիմեոն Զուղայեցուն:

14 Վ. Առաքելյան, Ներածություն հայերենի շարահյուսության, Երևան, 1959, էջ 10:

15 Իմիջիայլոց, լատինաբաններից Գալանոսը ևս ընդունում է տասո հոլով, հավանաբար, հետևելով Զուղայեցուն, որին, ինչպես տեսանք վերևում, լավ ծանոթ էր:

16 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. II, Երևան, 1945, էջ 439:

17 Նույն տեղում:

18 Նույն տեղում, էջ 444:

Ջուղայում եղած ժամանակ Սիմեոնը չի բավականանում միայն մանկավարժական գործունեությամբ, այլև ձեռնամուխ է լինում մի ուրիշ, ոչ պակաս կարևոր գործի՝ Նոր-Ջուղայի տպարանի հիմնադրմանը, որն առաջինն էր ողջ արևելյան աշխարհում։ Իրանով ևս նա հետապնդում էր նույն նպատակը, ինչ մանկավարժական գործունեությամբ՝ հայրենի երկրում տարածել գիր ու գրականություն, լուսավորություն և դրանով իսկ նպաստել ազգային ինքնությունության գիտակցության զարգացմանը, պայքարել շտապ ազդեցության դեմ, որի տարածման լավագույն միջոցներից մեկն էլ հանդիսանում էր տպագրությունը, որն այս շրջանում իր ձեռքը վերցնելու համար Հոռմի պապը մեծ գումարներ էր տրամադրում։ Ծիշտ է. Նոր-Ջուղայի տպարանի հիմնադրումը կապված է հաշատուր Կեսարացու անվան հետ, բայց հաշվի առնելով նրա ծերունազարդ հասակը, հավանաբար, պետք է, որ տպարանի հիմնադրման և ղեկավարման աշխատանքների հիմնական ծանրությունը ընկած լինեի Ս. Ջուղայեցու վրա, որը ևս Կեսարացու հոգևոր որդին էր, ավելի քան 20 տարվա աշակերտը և կրտսեր ընկերը։ Ըստ երևույթին, հենց այդ ամենն է նկատի ունենալով է, որ Թևոդիկը տպագրության գործում (և ոչ միայն տպագրության գործում,—Հ. Մ.) Ջուղայեցուն համարում է հաշատուրի «աջ բազուկը»։ Դա երևում է նաև տպարանի հրատարակած գրքերի հիշատակարաններից. միշտ, որպես կանոն, ևս Կեսարացուց հետո տրվում է Սիմեոնի անունը և նոր միայն ուրիշներին։ Այս տպարանում 1641 թ. լույս տեսած «Հարանց վարք»-ի հիշատակարանից իմանում ենք, որ Սիմեոնը նույն թվականին հաշատուր Կեսարացուց ստացել է վարդապետական¹⁹ աստիճան։ «Յիշեսջիք եւ զհոգևոր որդեակքն իմ զՏէր Սիմէօն վարդապետն։ Եթ զտէր Իսկովթ վարդապետն, որ յայսմ ամի, շնորհիւն աստուծոյ տուաք գաւազան երկոցունցն»²⁰։ Հաջորդ թվականին լույս տեսած «Ժամագիրք ատենի» գրքում արդեն խնդրվում է հիշել «զտէր Սիմէօն քաջ և արի աստուծաբան վարդապետն որ է աղբիւր իմաստութեան»²¹։

«Ժամագիրք ատենի»-ն Նոր-Ջուղայի տպարանից դուրս եկած վերջին գիրքն է, որից հետո տպարանը փակվում է, հավանաբար թշնամական ուժերի ճնշման և նյութական միջոցների սղության պատճառով։ Տպարանը փակվելուց հետո Ջուղայեցին Փիլիպոս կաթողիկոսի հրավերով գալիս է Հայաստան՝ դասավանդելու Հովհաննավանքի դպրոցում, որը որոշ ժամանակ անց տեղափոխվեց էջմիածին։ Ջաքարիա Սարկավազի անորոշ վկայությունից կարելի է եզրակացնել, որ նա Հովհաննավանք պետք է եկած լինի մինչև 1646 թ.։ Ջաքարիա Սարկավազը, խոսելով Հովհաննավանքի առաջնորդ Ջաքարիա Վաղարշապատեցու մասին, թվարկում է նրա ձեռնարկած մի շարք միջոցառումները և ավելացնում, որ թուղթ գրեց Ն. Ջուղայի հայերին, որ նրանք Հաճ-Աբաս Սրկրորդից (1642—1667) իրավունք ստանան Հովհաննավանքի կալվածքները հարկերից ու տուրքերից ազատելու համար։ Ինչ պետք է լինեի մոտավորապես 1643 թ.։ Դրանից հետո Ջաքարիան «հաստատուեաց և դպրատունս, և զնուաստութիւն իմ կարգեաց ուսուցիչ մանկանցն։ Եւ եբեր Ջուղայեցի Սիմէօն վարդապետն, որ ուսոյց մեզ արհեստ արտաքնոց»²²։ Ջ. Սարկավազը պետք է առնվազն 16—17 տարեկան լինեի, որպեսզի կարգվեր մանուկների ուսուցիչ, և քանի որ նա ծնվել է 1627 թ., ապա դա կլինեի մոտավորապես 1643—44 թթ., որից հետո գալիս է Ջուղայեցին, որին աշակերտում է և ինքրի ինչպես տեսանք վերը, 1641—1643 թթ. Ս. Ջուղայեցին եղել էր Կ. Պոլսում (հավանաբար, իր արդեն փակվել էր տպարանը (1642 թ.)), որ հանդիպել էր Կ. Պոլսում։ Կարծում ենք, որ դրանից հետո էլ պետք է եկած լինի էջմիածին։ Որ Ջուղայեցին պետք է Հովհաննավանք եկած լինի այս ժամանակ (1644—45 թթ.) մասամբ հաստատվում է նաև նրանով, որ Ջուղայեցու զաւր նշելուց հետո Ջաքարիա Սարկավազը անմիջապես հիշատակում է 1646 թ. Ջաքարիա Վաղարշապատեցու Ջուղա գնալը։

Հովհաննավանքում որոշ ժամանակ դասավանդելուց հետո Ջուղայեցին տեղափոխվում է էջմիածին և այստեղ ևս աչքի ընկնում իր բազմահմուտ գիտելիքներով ու դասավանդման փայլուն ձիրքով։ Այդ է պատճառը, որ նրա դասախոսություններին մասնակցում էին միաբանության շատ անդամներ, մեծ թիվ փոքր, աշակերտ թիվ վարդապետ։

19 Ա. Ալպոյանյանը Ս. Ջուղայեցուն վարդապետ է անվանում անգամ 1629 թ., երբ հաշատուր Կեսարացու հետ գնում էր Լեհաստան. դա, մեր կարծիքով, ճիշտ չէ։

20 «Հարանց վարք», Նոր-Ջուղա, 1641, էջ 704։

21 «Ժամագիրք ատենի», Նոր-Ջուղա, 1642, էջ 605։

22 Ջ ա ք ա ր ի ա Ս ա ր կ ա վ ա ղ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, հատ. Գ, էջ 35։

Հենց այս ժամանակ էլ էջմիածնում Սիմեոնին աշակերտել է Առաքել Դավրիժեցին մոտ 50 տարեկան հասակում, այսինքն, ճիշտ Սիմեոնի տարիքում: Դրանից հետո Երևան քաղաքի քահանաների ու ժողովրդի պահանջով՝ Փիլիպոս կաթողիկոսը Ջուղայեցուն նշանակում է նրանց հոգևոր առաջնորդ, ըստ երևույթին, տալով նաև եպիսկոպոսական աստիճան: Ջուղայեցին, որպես Գառնիի գավառի առաջնորդ, նստում է Ամենափրկիչ (Հավուց թառ մականվամբ) վանքում:

Գառնիում մի քանի տարի աշխատելուց հետո գրում է իր ամենակարևոր աշխատությունը՝ «Տրամաբանութիւն» դիրքը: Մենք չգիտենք, թե Ն. Ակինյանն ինչ սկզբնաղբյուրի հիման վրա է «Տրամաբանութեան» գրության թվականը համարում 1649 թ., բայց դա շատ հավանական է, որովհետև Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում մենք ունենք 1650 թ. գրված ձեռագիր օրինակ (№ 2360), որը եղածների մեջ հնագույնն է: Ջուղայեցու տրամաբանութեան գիրքը մոտ 20 տարվա երկարատև ու համառ պիտա-մանկավարժական աշխատանքի արդյունք էր, աչքի էր ընկնում իր պարզ ու մասշնչի ոճով, հարցերի բազմակողմանի ու խոր վերլուծությամբ: Այն ունի մի կարևոր արժանիք ևս: Ինչպես հայտնի է, Հայաստանում տրամաբանությունը որպես գիտություն ունի դարերի սլատմություն. բավական բարձր զարգացման էր հասել գեո Դավթ Անհաղթի կողմից, իսկ հետագայում այդ բնագավառում աչքի են ընկել մի շարք մտածողներ: Այնուամենայնիվ, մինչև XVII դարը հայ իրականության մեջ չկար տրամաբանության մի ամբողջական դասագիրք, ուր ամփոփ ձևով բննարկված լինեին տրամաբանություն գիտության առարկան (մտածողության ձևերը՝ հասկացություն, դատողություն, մտահանգում) ամբողջությամբ: Այս ուղղությամբ առաջին համարձակ փորձը կատարում է Ս. Ջուղայեցին: Որպես տրամաբանության դասագիրք Ջուղայեցու աշխատությունն այնքան հաջող է եղել, որ XVII դարի երկրորդ կեսում և ողջ XVIII դարում, անգամ XIX դարի սկզբներին հանդիսացել է հայկական դպրոցների հիմնական դասագիրքը: Բավական է ասել, որ միայն Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում կան Ջուղայեցու տրամաբանության բազմաթիվ ձեռագիր օրինակներ, իսկ մեկական կամ մի քանի օրինակ գոյություն ունի համարյա ամեն մի թանգարանում, ուր կա հայերեն ձեռագրերի ժողովածու: 1728 թ. նշանավոր բանաստեղծ, մտածող և տպագրիչ Պաղղասար Դպիրը Կ. Պոլսում հրատարակում է Ջուղայեցու «Տրամաբանութիւն»-ը՝ կցելով իր վերջաբանը, որտեղ այն գնահատում է որպես «Դուռն և ճանապարհ... առ ամենայն փիլիսոփայութիւնս... որք ուսանին զսա բարութ մտածմամբ, դիւրաւ ճանապարհորդին առ ամենայն իմաստասիրութեան ուսմունս, իսկ առանց օժանդակութեան սորին՝ կարի դժուարաւ»²⁴: Ջուղայեցու «Տրամաբանութիւն»-ը ունենում է նաև իր երկրորդ հրատարակությունը (1794 թ. Կ. Պոլիս) և գործածությունից դուրս է գալիս միայն XIX դարի սկզբներին, երբ հանդես են գալիս նոր դասագրքեր, գրված նոր ժամանակի պահանջներին համապատասխան: Սակայն Ջուղայեցու «Տրամաբանութեան» նշանակությունն ու մատուցած ծառայությունը չի սահմանափակվում միայն տեղական՝ հայկական շրջանակներում, այլ դուրս է գալիս Հայաստանի սահմաններից և տարածվում հարևան Վրաստանում: 1755 թ. վրացական պատմության ու մտավոր մշակույթի աչքի ընկնող գործիչ Անտոնիոս Բագրատիոնիի (Թեյմուրազ վրաց կաթողիկոս (1720—1788) պատվերով Ֆիլիպ Ղայթմազաշվիլին (Փիլիպոս Ղայթմազյան) հայերենից վրացերենի է թարգմանել Ջուղայեցու «Տրամաբանութիւն»-ը՝ «Դիալեկտիկա» վերնագրով: Բայց դրանից առաջ էլ Ջուղա-

23 «Պաղղասար Դպիր» (Երևան, 1958) աշխատությունը հրատարակության պատրաստողներ Շուշանիկ Նազարյանը և Ասատուր Մնացականյանը նախաբանում, էջ 12-ի տողատակի ծանոթագրության մեջ, հնարավոր են համարում, որ Ս. Ջուղայեցու Տրամաբանությունը կարող է լույս տեսած լինել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող № 8351 ձեռագիր օրինակի հիման վրա: Այդ դեպքում վերջինս պետք է գրած լինեին Պաղղասար Դպիրը: Իսկապես, ձեռագիրը և տպագիրը նման են իրար այնքան, որ սուաջին հայացքից կարելի է նման եզրակացության հանգել, բայց մանրազնին համեմատությունը մեզ բերեց այն եզրակացության, որ նշված ձեռագիրն արտագրված է տպագրից, առանց որևէ տարբերություն: Ապացուցելու համար բավական է ասել, որ տպագրական յուրաքանչյուր մամուլի և՛ վերջում, և՛ սկզբում նշված է տվյալ մամուլի թիվը: Գրիչը ևս ճիշտ նույն տեղում, առանց հասկանալու, արտագրել է համապատասխան թիվը, օրինակ՝ գրքի 49-րդ էջի հենց սկզբում գրված է «4», որն ընկած է «առնչութիւն» բառից 49-րդ էջն անցած «չութեան» մասի «չ»-ից առաջ, գրիչը ևս «4»-ը «չ»-ից առաջ գրելու համար տողի մեջտեղում բառը բաժանել է նույնպիսի մասերի:

24 Ս. Ջուղայեցի, Գիրք տրամաբանութեան, Կ. Պոլիս, 1728, էջ 295:

յեցու գիրքը հայտնի էր վրաց մտածողներին: Դեռ 1752 թ. Ա. Բագրատիոնիի կազմած «Ապեկալի»²⁵ աշխատության 81—88-րդ և 90—119-րդ գլուխների հիմքում արդեն ընկած են Ս. Զուլայեցու «Տրամաբանութեան» համապատասխան բաժինները²⁶, որի մասին վկայում է ինքը՝ Ա. Բագրատիոնին: Մի քիչ ավելի ուշ Փիլիպոս Ղաթմազյանը երկրորդ անգամ է Զուլայեցու «Տրամաբանութեան»-ը թարգմանում վրացերենի՝ նիկողայոս կրոնավորի օգնությամբ²⁷, վրաց մտավորականությունը Զուլայեցու գրքին ծանոթացել է հիմնականում առաջին հրատարակության (1725 թ.) շնորհիվ, որից էլ կատարվել են վերահիշյալ թարգմանությունները: Հետագայում Զուլայեցուց օգտվել են նաև ուրիշները: Բավական է ասել, որ XVIII դարի վերջում և XIX դարի սկզբում վրաց նշանավոր մտածող Հովհան Բատոնիշվիլու (Արքայազն) կազմած «Կալամասորա» աշխատության մեջ փիլիսոփայության բաժնում հեղինակը տեղ է տվել վրացական փիլիսոփայական մտքի աչքի ընկնող ներկայացուցիչներին, հայերից՝ Դավիթ Անհաղթին ու Ս. Զուլայեցուն, եվրոպացիներից՝ Բաումայստերին ու Կոնդիլյակին, իսկ ռուսներից՝ Մ. Լոմոնոսովին:

1651 թ. Սիմեոնը մեկնություն է գրում հինգերորդ դարի հույն նշանավոր մտածող, նորպլատոնական Պրոկլ Դիսկոխոսի «Շաշկապր աստուածաբանականք» հայտնի աշխատությանը, որը վրացերենից հայերենի էր թարգմանել Լոռու Պղնձահանք եկեղեցու քահանա Սիմեոնը՝ 1248 թ.: Վերջինս հայկական մշակույթի պատմության մեջ հայտնի է հենց վրացերենից կատարած իր բազմաթիվ թարգմանություններով, որոնցից մեկն էլ վերահիշյալ աշխատությունն է:

Զուլայեցին ամենից առաջ թարգմանության լեզուն դարձնում է պարզ ու մատչելի, ազատում ավելորդ խրթնաբանությունից, վերացնում կրկնությունները: Երբեմն դժվար հասկանալի մտքերը վերաշարադրում է ավելի հասկանալի ձևով, իսկ երբեմն էլ Պրոկլի մտքերին հակադրում իր մտքերը: Սիմեոնը ձեռնամուխ եղավ նման գործի, որովհետև Դավրիժեցու վկայությամբ «առաջին թարգմանութիւնն աշխատութիւնս բազումս տայր կարգացողին, զի հոլովք անուանցն և խոնարհմունք բայիցն, և շարադրութիւնք բառիցն, ոչ էր ըստ պատշաճին, և ըստ քերական արհեստին, յաղագս որոյ և միտք բանին ընդ նմին այլայլիր. այլ և յոլով տեղիս կրկնաբանութիւնք կային միոյ բանի, և ընթերցողն բազում աշխատութիւնս կրէր և օգուտս սակաւ գտանէր: Իսկ սա ըստ քերական արհեստին զամենայն ուղղեալ յարդարեաց, որ դիւրաւ իմանի կարգացողին, և բազում օգտութիւն շնորհէ մտաց մարդոյ»²⁸:

Հետաքրքիր է, որ Պրոկլի աշխատությունը, Զուլայեցու մեկնություններով հանդերձ, 1757 թ. նորից վրացերենի են թարգմանել Փիլիպոս Ղաթմազյանը և վրաց Վախթանգ թագավորի թոռնորդի Իվանե Օրբելիանին: Այդ մասին կա Իվանե Օրբելիանու շատ հետաքրքիր հիշատակարանը, որն անվանի հայագետ Բարսեղ Սարգիսյանը թարգմանաբար հրատարակել է «Բազմավեպ»-ում²⁹:

Վրացերեն թարգմանությունից մի քանի տարի առաջ (1750 թ.) Պրոկլի նույն աշխատությանը և Ս. Զուլայեցու մեկնություններին մի նոր մեկնություն է գրել XVIII դարի նշանավոր գործիչ, հետադայում կաթողիկոս Սիմեոն Երևանցին:

Իմիջիայլոց, Պրոկլի աշխատության թարգմանության և Սիմեոնի գրած մեկնության հարցերով զբաղվել են բազմաթիվ հեղինակներ, որոնցից ամենից վերջինը վրաց փիլիսոփայության պատմաբան Շ. Նուրուբիձեն է: Իր «Վրացական փիլիսոփայության պատմություն» ստվարածավալ աշխատության մեջ նա, հիմք ընդունելով Ն. Մառի մի ոչ-ճիշտ կարծիքը, ըստ որի Ստեփանոս Լեւոնցին XVI դարի մտածող է և լատինականից հայերենի է թարգմանել «Պատճառաց գիրք»-ը³⁰, զարգացնում է այն սխալ միտքը, որ իբր այդ «թարգմանությունը բացեց հայ մտա-

²⁵ «Ապեկալի» վրացերեն նշանակում է գանձ, թանկարժեք քար, տվյալ դեպքում գործածված է փիլիսոփայական գանձի իմաստով:

²⁶ Տե՛ս Գ. Մ. Կալանդարիշվիլի, Очерки по истории логики в Грузии. Тбилиси, 1955, էջ 110:

²⁷ Տե՛ս Ս. Մ. Մուրադյան, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII в. Тбилиси, 1963 (канд. диссертация):

²⁸ Ա. Ռ. Դավրիժեցի, Պատմութիւն հայոց, էջ 406:

²⁹ «Բազմավեպ», 1884, էջ 122—130:

³⁰ Н. Я. Марр, Иоанн Петрицкий, грузинский неоплатоник XI—XII в. СПб., 1909, էջ 8:

ծողներին աչքերը» և առիթ դարձավ Ս. Զուղայեցու վերոհիշյալ քայլին (հարկ է նշել, որ Շ. Նուցուրիձեն «Պատճառաց գիրք»-ը վերագրում է V դարի վրաց փիլիսոփա Պյոտր Իվերին, մինչդեռ համաշխարհային փիլիսոփայական գրականության մեջ հայտնի է Արիստոտելի և Պրոկլի անունով, ավելի ճիշտ, որպես Պրոկլի վերոհիշյալ աշխատության համառոտագրություն)՝ նոր մեկնություններ գրելուն։ Հանրահայտ ճմարտություն է, որ Ստեփանոս Լեհացին XVII դարի գործիչ է, ամենայն հավանականությամբ Սիմեոնի աշակերտներից մեկը և «Պատճառաց գիրք»-ը՝ այնքանի է թարգմանել 1660 թ.՝ քաջ ծանոթ լինելով Սիմեոն Զուղայեցու մեկնություններին, անգամ «Պատճառաց գրքի» թարգմանության մեջ շատ հաճախ մատնացույց է անում Պրոկլի աշխատության համապատասխան գլուխները, ի դուրսություն Պրոկլի գիրքն ուսումնասիրողներին։ Մեր կարծիքով, ճիշտ է Ն. Ակինյանը, ըստ որի Ստ. Լեհացին «Պատճառաց գիրք»-ը թարգմանել է՝ դրդապատճառ ունենալով «Սիմեոն Զուղայեցվո «մեկնությունը», որ իբրև դասագիրք սկսած էր գործածվել հայ դպրոցներում մեջ։ Անոր ինչ-ինչ մթառությունը լուսաբանելու համար ձևափոխված ըլլալու է Ստեփանոս այս գործին, թեև այս մասին որևէ ակնարկություն չէ ըրած իր թարգմանության հիշատակարանին մեջ»³¹։ Հարևանցի արժեք նշել, որ այս մեկնության վերնադիրը թյուրիմացության մեջ է գցել որոշ հեղինակների, որոնք Սիմեոնին անվանում են Գառնեցի, մինչդեռ Սիմեոնը ոչ մի տեղ իրեն չի կոչում Գառնեցի, այլ միայն «Գառնույ եպիսկոպոս»։ Ուստի, Սիմեոն Զուղայեցին նույն ինքը Գառնիի եպիսկոպոս Սիմեոնն է, իսկ Սիմեոն Գառնեցի գործիչ մենք այս ժամանակ չենք ունեցել։

1656 թ. Զուղայեցին ձեռնարկում է «Արտադրութիւն վասն անձին մարդոյ» աշխատությունը, որի մի մասը «Տրամաբանութեան» առաջին հրատարակության ժամանակ տպագրիչը ներկայացրել է որպես անհայտ հեղինակի գործ՝ «Յաղագս զանազան նշանակութեանց զխաւոր բառից տրամաբանականց, յայլմէ ումեմն՝ նոր իմաստասերէ հմտագոյն վարդապետէ» վերնագրով՝ չիմանալով, որ դա ևս Զուղայեցունն է։ Երկրորդ հրատարակության ժամանակ արդեն այդ թյուրիմացությունը շտկված է և տպագրված իսկական հեղինակի անունով և այն էլ ոչ թե կիսատ, այլ լրիվ։ Թեև այս աշխատությունը վերահաս մասնական պատճառով մնացել է կիսատ, բայց և այնպես բավականին նոր արժեքավոր մտքեր կան (հատկապես իմացության տեսության վերաբերյալ), որոնք նախորդ աշխատություններում կամ բացակայում են, կամ էլ շատ սղոտ են ու չբացահայտված։ Այդ նկատի ունենալով է, որ Պաղգասար Գալիլը հարկ է համարել հրատարակել այն՝ կցելով նաև հետևյալ գնահատականը. «Բանքս լի են իմաստիւք և զօրիդ իմացուածովք, նմին իրի յոյժ փափագանօք և աննախանձ սիրով առնալ զսա եղի ի վերջնում տրամաբանական մատենիս, զի մի ծածկեալ մնայցէ յուսումնասէր եղբարցդ այսպիսի գեղեցիկ և շահաւետ աշխատութիւն, որ կարի յոյժ պիտանի է այսմ մեծի արհեստիս, այսինքն տրամաբանական գիտութեանս»³²։

Վերը թվարկված բոլոր աշխատությունները Զուղայեցին գրել է հիմնականում հաշվի առնելով դպրոցական պահանջները՝ ուսուցողական նպատակով։ Իսկ հայտնի է, որ դպրոցական դասագրքում կամ ուսումնական ձեռնարկում ոչ բոլոր դեպքերում է, որ հեղինակը կարող է այս կամ այն հարցը քննել ու լուսաբանել ամբողջ խորությամբ, որովհետև այդ դեպքում գիրքը կդադարի դասագիրք լինելուց։ Հետևաբար, կարելի է ենթադրել, որ նա ունեցել է ավելի հարուստ ու խոր գիտելիքներ, քան դրսևորել է իր թողած աշխատություններում։ Բայց և այնպես, այն ամենը, ինչ մենք գտնում ենք Զուղայեցու կազմած դասագրքերում, մեզ իրավունք են տալիս նրան XVII դարի հայ ամենամեծ փիլիսոփա-մտածողը համարելու։

Սիմեոն Զուղայեցու անունով մեզ հասել են նաև որոշ տաղեր³³, որոնց վերլուծությունը այստեղ չենք կարող տալ տեղի սղության պատճառով։

Հիմք ընդունելով Հ. Տաշյանի «Զեռագրաց ցուցակ»-ում բերված մի ավետարանի հիշատակարանը, Մ. Օրմանյանը, սրան հետևելով և Հր. Աճառյանը, գտնում են, որ Ս. Զուղայեցին հաշ. կեսարացուց հետո եղել է Սպահանի նահանգի հոգևոր առաջնորդը. «Արդ սկիզբն եղև ևս վիտարանիս ի... թրաբերութեանս հայկազեան տոհմիս ԹԺ՝ (1651) ամի, ի հայրապետութեան

31 Ն. Ակինյան, Սիմեոն Պղնձահանեցի և իր թարգմանությունները վրացերեն, էջ 47—48։

32 Ս. Զուղայեցի, Գիրք տրամաբանութեան, 1728, էջ 235։

33 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. № 1721, եր. 129բ—130ա «Ի տէր Սիմէոն վարդապետի Զուղայեցույ», եր. 150բ—151բ «նորին Սիմէոն վարդապետէ»։

տեառն Փիլիպոսի սուրբ աթոռոյն էջմիածնայ, և ի արքեպիսկոպոսութեանն Նոր Զուղայոյ նահանգի Տէր Սիմեոնի Զուղայեցոյ»³⁴։

Տեր-Ավետիսյանի վերոհիշյալ Զեռագրաց ցուցակում ևս մենք հանդիպում ենք նման հիշատակության, բայց և այնպես չենք կարող ընդունել այդ միտքը, որովհետեւ, նախ՝ բացառված չէ, որ նույն ժամանակ կարող էր լինել մի այլ Սիմեոն Զուղայեցի վարդապետ և ապա՝ նույն Տեր-Ավետիսյանի ձեռագրացուցակում կու գրան հակառակ մի այնքան հավաստի վկայություն՝ գրված 1654 թ., որ փարատում է ամեն մի կասկածանք. «Արդ զրեցաւ աստուածային այս մատեան, որ կոչի հարցմունք ի յերկիր։ Արարատեան, ի քաղաքս Արեան, ի թուականութեանս հայոց ՌՃԳ ամի, և ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի սրբազան ղիտապետի, ի սոյն ամի փոխեցաւ առ յոյսն բնաւից։ Եկաց հայրապետութեան ամս 23 և յաջորդեաց և նստաւ հայրապետ հայոց տէր Յակոբ Զուղայեցի, այր քաջադոտի լի ամենայն առաքինութեամբ և վերա ղիտողութեան մեռոյ զաւառի տեառն Սիմէօնի քաջ բարունապետի Զուղայեցոյ անյաղք փիլիսոփայի. որ նստի ի սուրբ մենաստանն Ամենափրկիչս ի ձուրն Իսաակոյ (ընդգծումը մերն է. — Հ. Մ.)»³⁵։

Այս ամենին կարող ենք ավելացնել և այն, որ բոլոր աղբյուրների և ուսումնասիրողների միաբան վկայությամբ իս. Կեսարացին մահացել է 1646 թ., որից հետո մինչև 1651 թ. ոչ ոք չի բնորոշվել պարսկահայոց հոգևոր առաջնորդ, որովհետև առաջադրում էին իս. Կեսարացու աշակերտ և Ս. Զուղայեցու դասընկեր Դավթին (որը վարդապետական զավաղան էր ստացել 1641 թ., Զուղայեցու հետ միասին), սակայն նա հանձն չէր առնում։ Բայց ի վերջո տեղի է տալիս և բնորոշում հոգևոր առաջնորդ. իսկ թե ո՞վ էր Սպահանի վերոհիշյալ առաջնորդ Սիմեոն Զուղայեցին, առայժմ հաստատ պատասխանել չենք կարող։ Գուցե դա Դավթի բացակայության ժամանակ (1652 թ. նա գնացել էր Նրուսաղեմ) պաշտոնակատար մեկն էր, և հնարավոր է, որ լիներ մեր Սիմեոն Զուղայեցին։

1656 թ. Զուղայեցին որպես նվիրակ գնացել է շրջագայելու «Հունաց աշխարհում», այսինքն, Թուրքիայի տիրապետության տակ դտնվող հայկական զավառներում (հավանաբար, այս ժամանակ Կ. Պոլսում պատրիարքական աթոռի համար մղվող պայքարին որպես հեղինակավոր ղեմք միջամտելու նպատակով), բայց կես ճանապարհին հիվանդացել է ու կնքել իր մահկանացուն 1657 թ. փետրվարի 27-ին Նվգոկիա (Թոխաթ) քաղաքում։

Այսպիսով, Սիմեոն Զուղայեցին հանդիսանում է XVII դարի հայ ամենամեծ փիլիսոփամտածողը և անչնչելի հետք է թողել հայ ժողովրդի մտավոր մշակույթի, մանավորապես փիլիսոփայության և լեզվաբանության հետագա զարգացման վրա։ Զուղայեցին ժառանգել ու զարգացրել է հայ փիլիսոփայական մտքի այն լավագույն ավանդները, որոնք սկզբնավորել է ղևո Դավիթ Անհաղթը, իսկ շարունակողները եղել են Վ. Ռարունին, Հ. Որոտնեցին, Գր. Տաթևացին և ուրիշներ։

34 Հ. Տաշյան, Զուցակ հայերեն ձեռագրաց..., էջ 362—363։

35 Ս. Տեր-Ավետիսյան, Զուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Զուղայի, էջ 1303։